ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ»

Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2015թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ

Մայիս 2016

Բովանդակություն

	Էջ
Խորհրդի կազմ	3
Անկախ աուդիտորական եզրակացություն	4
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Խորհրդի կազմ

Լևոն Շահվերդյան	*ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ, նախագահ*
Արտակ Ալբերտյան	*ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության վառելիքաէներգետիկ համալիրի և տնտեսության արտադրական այլ ոլորտների բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ*
Ռուբիկ Դավթյան	*ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության արտադրական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ*
Արմեն Մելիք-Իսրայելյան	*ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ*
Արամ Անանյան	*«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն*

Ընկերության ղեկավար անձնակազմ

Արամ Անանյան	*«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն*
Արթուր Մկրտչյան	*Գլխավոր տնօրենի տեղակալ ֆինանսատնտեսագիտական գծով*
Արտավազդ Ղազարյան	*Գլխավոր տնօրենի տեղակալ գլխավոր հաշվապահ*

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա
ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին, նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Քրոու Հորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ
ՀՀ, ք. Երևան 0037, Ա.Տիգրանյան 38/55; Հեռ.՝ (+37410) 20 11 51; Ֆաքս՝ (+37410) 20 11 50; www.sosaudit.am; էլ-փոստ՝ info@sosaudit.am
An Associate of the Crowe Horwath Business Alliance
38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA; Tel.: (+37410) 20 11 51; Fax: (+37410) 20 11 50; www.sosaudit.am; E-mail: info@sosaudit.am

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու, համար:
Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

2 մայիսի, 2016թ.
"ՍՕՍ-Աուդիտ" ՍՊԸ

Մանվել Ղազարյան
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ»
«СОС-АУДИТ»
«SOS-AUDIT»
00051316

Քրոու Հորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ

ՀՀ; ք. Երևան 0037, Ա.Տիգրանյան 38/55; Հեռ.՝ (+37410) 20 11 51; Ֆաքս՝ (+37410) 20 11 50; www.sosaudit.am; էլ-փոստ՝ info@sosaudit.am

An Associate of the Crowe Horwath Business Alliance

38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA; Tel.: (+37410) 20 11 51; Fax: (+37410) 20 11 50; www.sosaudit.am; E-mail: info@sosaudit.am

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

հազար դրամ

	Ծնթ.	2015թ.	2014թ.*
Հասույթ	4	7,796,696	8,478,613
Վաճառքի ինքնարժեք	5	(3,601,029)	(3,576,998)
Համախառն շահույթ		**4,195,667**	**4,901,615**
Վարչական ծախսեր	6	(1,187,566)	(1,020,726)
Այլ եկամուտ	7	621,155	946,264
Այլ ծախսեր	8	(1,105,994)	(780,480)
Ֆինանսական ծախսեր	9	(476,993)	(592,314)
Ֆինանսական եկամուտ	10	72,989	133,485
Այլ օգուտ/(կորուստ)	11	(172,827)	(2,880,987)
Շահույթ մինչև հարկումը		**1,946,431**	**706,857**
Շահութահարկի գծով ծախս	12	(386,526)	(717,194)
Տարվա զուտ շահույթ/(վնաս)		**1,559,905**	**(10,337)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**1,559,905**	**(10,337)**

(*) Համեմատական գումարները վերաներկայացվել են (ծնթ. 3.21):

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2016թ. մայիսի 2-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Լիանա Անանյան

Գլխավոր տնօրեն

Արտավազդ Ղազարյան

Գլխավոր հաշվապահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2015թ. *հազար դրամ*	31.12.2014թ.* *հազար դրամ*	01.01.2014թ.* *հազար դրամ*
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	13	51,914,322	49,269,491	46,890,658
Ոչ նյութական ակտիվներ	14	41,640	21,791	20,333
Հետաձգված հարկային ակտիվներ	12	1,195,524	1,387,667	2,073,265
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	15	676,022	1,312,707	2,172,713
		53,827,508	**51,991,656**	**51,156,969**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	16	2,078,732	2,085,292	2,017,967
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	17	8,194,969	4,350,416	2,662,217
Շահութահարկի գծով կանխավճար	12	171,756	365,787	397,383
Ֆինանսական ակտիվներ	18	141,020	4,688	216,856
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19	705,153	1,889,498	215,045
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		-	-	239,390
		11,291,630	**8,695,681**	**5,748,858**
Ընդամենը ակտիվներ		**65,119,138**	**60,687,337**	**56,905,827**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Սեփական կապիտալ				
Կանոնադրական կապիտալ	24	8,755,027	7,217,996	7,126,346
Էմիսիոն եկամուտ		(8,725)	3,799	(119,687)
Պահուստային կապիտալ		162,744	162,744	162,744
Կուտակված շահույթ		11,348,242	9,821,615	9,831,952
		20,257,288	**17,206,154**	**17,001,355**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	20	22,112,186	20,573,124	18,281,374
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	21	9,765,710	7,961,716	4,757,537
		31,877,896	**28,534,840**	**23,038,911**
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	20	1,563,063	3,149,753	5,093,374
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	22	-	308,396	-
Առևտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր	23	11,420,891	11,488,194	11,772,187
		12,983,954	**14,946,343**	**16,865,561**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**65,119,138**	**60,687,337**	**56,905,827**

(*) Համեմատական գումարները վերաներկայացվել են (ծնթ. 3.21):

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

	2015թ. *հազար դրամ*	2014թ. *հազար դրամ*
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ		
Զուտ շահույթ/(վնաս)	1,559,905	(10,337)
Ճշգրտումներ		
Հիմնական միջոցների մաշվածություն	2,819,421	2,731,014
ՀՄ-ի արժեզրկումից կորուստ	840,230	-
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	(12,307)	(15,332)
Հիմնական միջոցների լուծարումից վնաս	12,982	10,629
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների լուծարումից վնաս	-	239,390
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	5,375	3,332
Ոչ նյութական ակտիվների լուծարումից վնաս	7,776	-
Շահութահարկի գծով ծախս	386,526	717,194
Շահութահարկի գծով տուգանքներ և տույժեր	97	-
Ֆինանսական ծախսեր	476,993	592,314
Վարկերի գծով այլ (օգուտ)/կորուստներ	-	(137,025)
Ֆինանսական եկամուտներ՝ փոխառությունների գծով	(66,829)	(128,070)
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(4,439)	(4,371)
Եկամուտներին վերաբերող շնորհից եկամուտ	(158,142)	(8,989)
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	189,522	1,560
Արտարժութային (օգուտ)/վնաս	(743,335)	2,640,321
Գործառնական հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունը	**5,313,775**	**6,631,630**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում	(4,977,250)	(1,689,759)
Պաշարների (աճ)/նվազում	(15,226)	(254,640)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ/(նվազում)	(36,078)	(1,180,853)
Եկամուտներին վերաբերող շնորհի փոփոխություն	(159,431)	273,372
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շահութահարկի վճարումը	**125,790**	**3,779,750**
Վճարված շահութահարկ	(449)	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**125,341**	**3,779,750**

	2015թ.	2014թ.
	հազար դրամ	*հազար դրամ*
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ		
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման գծով	(4,209,457)	(3,713,900)
ՀՄ-ի օտարումից մուտքեր	16,493	15,337
Վճարումներ ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(33,000)	(4,790)
Տրված փոխառություններ	(1,700,000)	(600,043)
Տրված փոխառությունների մարումից մուտքեր	1,630,652	940,281
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**(4,295,312)**	**(3,363,115)**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ		
Կանոնադրական կապիտալի համալրում	-	413,129
Շաբաթաթերթերի վճարում	(33,278)	-
Վարկերի ստացում	7,811,536	5,402,933
Վարկերի մարում	(4,017,042)	(4,111,286)
Վարկային տոկոսների վճարում	(621,415)	(592,314)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	**3,139,801**	**1,112,462**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	**(1,030,170)**	**1,529,097**
Արտարժութային օգուտ/(վնաս) դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	(154,175)	145,356
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները տարեսկզբին	1,889,498	215,045
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները տարեվերջին	**705,153**	**1,889,498**

Հաշվետու տարում կատարված նշանակալի ոչ դրամային գործարքը հետևյալն է.
ա) Ստացված փոխառության մարում կանոնադրական կապիտալի ավելացմամբ՝ 1,546,293 հազար դրամ գումարի չափով (ծնթ. 24.1):

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ
հազար դրամ

	Ծնթ.	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013թ.		7,126,346	(119,687)	162,744	9,858,037	17,027,440
Ճշգրտումների ազդեցություն (ծնթ. 3.21)		-	-	-	(26,085)	(26,085)
Մնացորդն առ 1 հունվարի 2014թ.		7,126,346	(119,687)	162,744	9,831,952	17,001,355
Կանոնադրական կապիտալի աճ		175,998	237,131	-	-	413,129
Կապիտալի հետգնում		(84,348)	(113,645)	-	-	(197,993)
Տարվա շահույթ/(վնաս)		-	-	-	(10,337)	(10,337)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2014թ.		7,217,996	3,799	162,744	9,821,615	17,206,154
Կանոնադրական կապիտալի աճ	24.1	1,546,293	-	-		1,546,293
Կապիտալի հետգնում	24.2	(9,262)	(12,524)	-		(21,786)
Տարվա շահույթ/(վնաս)		-	-	-	1,559,905	1,559,905
Հայտարարված շահաբաժիններ		-	-		(33,278)	(33,278)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015թ.		8,755,027	(8,725)	162,744	11,348,242	20,257,288

(*) Համեմատական գումարները վերաներկայացվել են (ծնթ. 3.21):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
2015թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998թ. հուլիսի 27-ի թիվ 450 որոշման հիման վրա՝ «Հայէներգո» ՊՓԲԸ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ԴՀ-ի վերակազմավորման ճանապարհով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: 1998թ. օգոստոսի 21-ին այն վերակազմավորվել է որպես պետական փակ բաժնետիրական ընկերություն: Ընկերության կանոնադրությունը հաստատված է ՀՀ Էներգետիկայի նախարարության 1998թ. օգոստոսի 14-ի թիվ 254-ԳՄ հրամանով: «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՊՓԲԸ-ն 2000թ. փետրվարի 10-ին վերագրանցվել է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում որպես փակ բաժնետիրական ընկերություն:

Ընկերության միակ բաժնետերը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը: Ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարարին՝ համաձայն ՀՀ Կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1694-Ն որոշման:

Ընկերությունն ունի 9 մասնաճյուղ՝

- Արևելյան մասնաճյուղ
- Արևմտյան մասնաճյուղ
- Գորիսի մասնաճյուղ
- Նախագիծ մասնաճյուղ
- Էներգետիկ օբյեկտների կառուցման տնօրինություն մասնաճյուղ
- Զանգեզուրի մասնաճյուղ
- Հյուսիսային մասնաճյուղ
- Հարավային մասնաճյուղ

Ընկերությունն իրականացնում է հետևյալ հիմնական գործունեությունը՝

- Էլեկտրաէներգիայի հաղորդում,
- Էլեկտրաէներգիայի արտադրություն,
- Էներգետիկ օբյեկտների կառուցման, վերակառուցման, վերազինման, հավաքակցման, վերանորոգման աշխատանքներ,
- Բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի կառուցում,
- Էներգետիկ օբյեկտների գիտահետազոտական և նախագծային աշխատանքների կատարում:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Զորավար Անդրանիկի 1:
Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01522459:

1.2 Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել և կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների վրա: Հետևաբար, Հայաստանում ծավալած գործունեությունը կապված է այնպիսի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ներկայացված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա տնտեսական իրավիճակի հնարավոր ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Ընկերությունը չի կիրառել ՖՀՄՍ-ների հրապարակված հետևյալ նոր ստանդարտները կամ փոփոխությունները, որոնք սակայն դեռևս ուժի մեջ չեն: Ընկերությունը դեռևս չի վերլուծել նոր ստանդարտների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա:

- ՖՀՄՍ 9 "*Ֆինանսական գործիքներ*" (վերանայված 2014թ. հուլիսին) ստանդարտը ուժի մեջ է 2018թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Ստանդարտը փոխարինում են "Ֆինանսական գործիքներ ճանաչումը և չափում" ՀՀՄՍ 39-ին:

  ՖՀՄՍ 9-ի ներուծում է նոր պահանջներ. ա/ ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների դասակարգման ու չափման պահանջների, բ/ արժեզրկման մեթոդոլոգիայի, և գ/ հեդջի ընդհանուր հաշվառման վերաբերյալ: Մասնավորապես, ֆինանսական ակտիվների գծով.

  - ✓ Պարտքային ներդրումները, որոնք (i) կազմակերպության կողմից պահվում են պայմանագրային դրամական հոսքեր ստանալու նպատակով, և (ii) այդ պայմանագրային դրամական հոսքերը իրենցից բացառապես ներկայացնում են մայր գումարի և տոկոսավճարի վճարումներ, պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ հանած ճանաչված արժեզրկման գումարը; եթե տվյալ ակտիվը չի նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (ԻԱԾՎՄՉ)՝ իրական արժեքի ընտրանքի շրջանակներում:
  - ✓ Պարտքային ներդրումները, որոնք (i) կազմակերպության կողմից պահվում են և՛ պայմանագրային դրամական հոսքեր ստանալու, և՛ ֆինանսական ակտիվը վաճառելու նպատակով, և (ii) այդ պայմանագրային դրամական հոսքերը իրենցից բացառապես ներկայացնում են մայր գումարի և տոկոսավճարի վճարումներ, պետք է չափվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (ԻԱԱՀՖԱ); եթե տվյալ ակտիվը չի նախորոշվել որպես ԻԱԾՎՄՉ՝ իրական արժեքի ընտրանքի շրջանակներում:
  - ✓ Մնացած բոլոր պարտքային ներդրումները չափվում են ԻԱԾՎՄՉ-ով:
  - ✓ Բոլոր բաժնային ներդրումները չափվում են ԻԱԾՎՄՉ-ով, բացառությամբ, եթե բաժնային ներդրումը պահվում է վաճառքի նպատակով, ապա անշրջելի ընտրություն կարող է արվել սկզբնական ճանաչման պահին՝ այն չափելով ԻԱԱՀՖԱ-ով; սակայն շահաբաժիններից եկամուտը ճանաչելով շահույթում կամ վնասում:

  ՖՀՄՍ 9-ի ներառում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման ու չափման, ինչպես նաև ապաճանաչման վերաբերյալ: ՀՀՄՍ 39–ից հիմնական փոփոխությունը վերաբերվում է ԻԱԾՎՄՉ նախորոշված ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխության ներկայացմանը՝ պայմանավորված տվյա պարտավորության պարտքային ռիսկի փոփոխությամբ: Համաձայն ՖՀՄՍ 9-ի, նման փոփոխությունները ներկայացվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ եթե նման ներկայացումը կարող է ստեղծել կամ մեծացնել շահույթում կամ վնասում հաշվապահական անհամապատասխանությունը: Ֆինանսական գործիքի պարտքային ռիսկով պայմանավորված իրական արժեքի փոփոխությունը հետագայում չի վերադասակարգվում շահույթում կամ վնասում:

  ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մեթոդը արտացոլում է <u>ակնկալվող</u> պարտքային կորուստները, ի հակադրություն ՀՀՄՍ 39–ով պահանջվող <u>կրած</u> պարտքային կորուստների: Համաձայն ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մեթոդի, այլևս անհրաժեշտ չէ որ պարտքային վիճակի դեպքը տեղի ունենա, որպեսզի պարտքային կորուստը ճանաչվի: Այլ հակառակը, կազմակերպությունը միշտ պետք է հաշվառի անկնալվող պարտքային կորուստը և դրանցում փոփոխությունները: Պարտքային կորստի գումարը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվատու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար սկզբնական ճանաչումից հետո պարտքային ռիսկի փոփոխությունները:

ՖՀՍՍ 9-ի հեջավորման ընդհանուր պահանջները պահպանում են ՀՀՍՍ 39–ով պահանջվող հեջի երեք տեսակների համակարգը: Սակայն, առավել ճկուն համակարգ է ներմուծվել հեջային գործարքների ընդգրկման առումով, մասնավորապես՝ լայնացնելով այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջ, ինչպես նաև, ոչ-ֆինանսական հոդվածների ռիսկային բաղադրիչների տեսակների վերաբերյալ, որոնք կարող են դիտարկվել որպես հեջ: Նաև, արդյունավետության թեսթը այլևս· չի պահանջվում: Կազմակերպության ռիսկերի կառավարման վերաբերյալ պահանջվում է ավելի շատ բացահայտումներ:

- *"Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ"* ՖՀՍՍ 15-ը (հրապարակվել է 2014թ. մայիսին) ուժի մեջ են մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կազմակերպությունները կարող են Ստանդարտը կիրառել հետընթաց կամ ընտրել ձևափոխված անցումային դրույթները՝ որով Ստանդարտը հետընթաց կիրառել միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք Ստանդարտի սկզբնական կիրառման պահին ավարտված չեն: ՖՀՍՍ 15-ը սահմանում է համապարփակ միասնական համակարգ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՍՍ 15-ի անցման ամսաթվի դրությամբ հետևյալ ստանդարտները և մեկնաբանությունները կորցնում են իրենց ուժը.
  - ✓ ՀՀՍՍ 18, Հասույթ,
  - ✓ ՀՀՍՍ 11, Կառուցման պայմանագրեր,
  - ✓ ՖՀՍՍԿ Մեկնաբանություն 13, Հաճախորդի հավատարմության ծրագրեր
  - ✓ ՖՀՍՍԿ Մեկնաբանություն 15, Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր,
  - ✓ ՖՀՍՍԿ Մեկնաբանություն 18, Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից,
  - ✓ ՍՍԿ Մեկնաբանություն 31, Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ:

ՖՀՍՍ 15-ը վերաբերվում է միայն հաճախորդների հետ պայմանագրերին: Համաձայն ՖՀՍՍ 15-ի, կազմակերպություն հաճախորդը կողմ է, որը կազմակերպության հետ պայմանագիր է կնքում հատուցման դիմաց ձեռք բերելու կազմակերպության սովորական գործունեության մաս կազմող ապրանքներ կամ ծառայություններ: Ի տարբերություն ՀՀՍՍ 18-ի, պարտքային կամ բաժնային գործիքներից տոկոսային կամ շահաբաժնային եկամուտը չեն ընդգրկվում ՖՀՍՍ 15-ի գործողության ոլորտում:

ՖՀՍՍ 15-ը հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի համար սահմանում է միասնական համակարգ: Նրա հիմնական սկզբունքը այն է, որ հաճախորդին ապրանքների կամ ծառայությունների իրացումից հասույթը ճանաչվում է արտացոլելով այն գումարը, որը ակնկալվում է որ կազմակերպությունը իրավունք կունենա ստանալու տվյալ ապրանքի կամ ծառայության դիմաց:

ՖՀՍՍ 15-ը ներմուծում է հասույթի ճանաչման և չափման 5–քայլ համակարգ.

Քայլ 1. Որոշել հաճախորդի հետ պայմանագիրը

Քայլ 2. Որոշել պայմանագրով սահմանված կատարողական պարտավորությունները

Քայլ 3. Որոշել գործարքի գինը,

Քայլ 4. Գործարքի գինը բաշխել կատարողական պարտավորությունների վրա,

Քայլ 5. Հասույթը ճանաչել այն պահին, երբ կազմակերպությունը իրականացնում է կատարողական պարտավորությունը:

- *"Վարձակալություն"* ՖՀՍՍ 16-ը (հրապարակվել է 2016թ. հունվարին) ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ, եթե կիրառվում է նաև ՖՀՍՍ 15-ը: Ստանդարտը փոխարինում է "Վարձակալություն" ՀՀՍՍ 7-ին:

ՖՀՄՍ 16-ի համաձայն վարձակալը ճանաչում է օգտագործման-իրավունքով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման-իրավունքով ակտիվը հաշվառվում է այլ ոչ-ֆինանսական ակտիվների նման և մաշեցվում է, իսկ պարտավորության գծով հաշվառվում է ֆինանսական ծախս:

Վարձակալը կարող է վարձակալության գծով վճարները հաշվառել ծախսեր ուղիղ-գծային կամ այլ համակարգված մոտեցումով, եթե

- Վարձակալության ժամկետը 12 ամիս է կամ պակաս - այս ընտրությունը կատարվում է ակտիվների դասի գծով;
- Վարձակալված ակտիվը նոր վիճակում ունի ցածր արժեք (օրինակ՝ անձնական համակարգիչներ կամ գրասենյակային մանր կահույք) - այս ընտրությունը կատարվում է առանձին վարձակալությունների գծով:

- *Փոփոխություններ "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" ՀՀՄՍ 1-ում, - "Բացահայտման նախաձեռնություն"* (հրապարակվել է 2014թ. դեկտեմբերին) ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Փոփոխության հիմնական կետերը հետևյալն են.
  - Կազմակերպությունը չպետք է նվազեցնի ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը պատելով ոչ էական տեղեկատվությամբ, կամ միացնելով էական հոդվածները, որոնք ունեն տարբերվող բնույթ կամ գործառույթ:
  - Կազմակերպությունը պարտավոր չէ տալ ՖՀՄՍ-ներով պահանջվող որոշակի բացահայտումը, եթե այդ բացահայտումով ներկացվող տեղեկատվությունը էական չէ:
  - Հետևյալ հոդվածների համար պահանջվում է առանձին բացահայտում Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներառված այլ համապարփակ ֆինանսական արդյունք բաժնում.
    - ասոցիացված կամ համատեղ կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքում բաժենմասնակցության մեթոդով հաշվառված մասնեբաժինը, որը հետագայում չի վերադասակարգվելու շահույթում կամ վնասում;
    - ասոցիացված կամ համատեղ կազմակերպությունների այլ համապարփակ ֆինանսական արդյունքում բաժենմասնակցության մեթոդով հաշվառված մասնեբաժինը, որը հետագայում վերադասակարգվելու է շահույթում կամ վնասում:

- *Փոփոխություններ "Հիմնական միջոցներ" ՀՀՄՍ 16-ում, և "Ոչ նյութական ակտիվներ" ՀՀՄՍ 38*-ում, - "*Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների վերաբերյալ պարզաբանում*" (հրապարակվել է 2014թ. մայիսին) ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կիրառվում է առաջընթաց: ՀՀՄՍ 16-ում փոփոխությունը հիմնական միջոցների մաշվածության հաշվարկման նպատակով արգելում է եկամտի վրա հիմնված մեթոդի կիրառում: ՀՀՄՍ 38-ում փոփոխությունը ներառում է վիճարկելի ենթադրություն, որ ոչ նյութական ակտիվի ամորտիզայի հաշվարկման համար հասույթի վրա հիմնված մեթոդը պատշաճ չէ (որը կարելի է վիճարկել միայն երկու սահմանափակ հանգամանքում):

- *Փոփոխություններ "Հիմնական միջոցներ" ՀՀՄՍ 16-ում, և "Գյուղատնտեսություն" ՀՀՄՍ 41*-ում, - "*Կայուն կենսաբանական ակտիվների* " (հրապարակվել է 2014թ. հունիսին) ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կիրառվում է հետընթաց: Փոփոխությունը սահմանում է կայուն կենսաբանական ակտիվը (հասուն կայուն կենսաբանական ակտիվ, որը այլևս էական կենսաբանական փոփոխություն չի կրում և որը միայն օգտագործվում է բերք ստանալու նպատակով) և պահանջում, որ այդ սահմանմանը բավարարող կենսաբանական ակտիվները հաշվառվեն որպես հիմնական միջոցներ ՀՀՄՍ 16-ով՝ ՀՀՄՍ 41-ի

փոխարեն: Կայուն կենսաբանական ակտիվները կարող են չափվել ՀՀՄՍ 16-ի ինքնարժեքի կամ վերագնահատման արժեքի մեթոդով: Կայուն կենսաբանական ակտիվներում բերքի աճեցումը շարունակվում է չափվել ՀՀՄՍ 41-ով:

- *Փոփոխություններ "Առանձին ֆինանսական հաշվետվություններ" ՀՀՄՍ 27-ում, "Բաժնեմասնակցության մեթոդը առանձին ֆինանսական հաշվետվություններում"* (հրապարակվել է 2014թ. օգոստոսին) ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կիրառվում է հետընթաց: Փոփոխությունները սևեռված են առանձին ֆինանսական հաշվետվություններին և այդ հաշվետվություններում թույլատրում են բաժնեմասնակցության մեթոդի կիրառումը: Մասնավորապես, փոփոխությունները թույլատրում են դուստր կազմակերպություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումները հաշվառել.
    - ինքնարժեքով,
    - ՖՀՄՍ 9-ի համաձայն (կամ ՀՀՄՍ 39-ի համաձայն, եթե ՖՀՄՍ –ը դեռ չեն ընդունել); կամ
    - Կիրառելով բաժնեմասնակցության մեթոդը՝ ինչպես նկարագրված է *"Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում"* ՀՀՄՍ 28-ում:

  Նույն կատեգորիայի ներդրումների գծով պետք է կիրառվի նույն հաշվառումը:

  Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ երբ մայր կազմակերպությունը դադարում է լինել ներդրումային կազմակերպություն, կամ դառնում է ներդրումային կազմակերպություն, ապա փոփոխությունը պետք է կիրառի այն ամսաթվից, երբ կարգավիճակը փոխվել է:

- *Փոփոխություններ "Համախմբված ֆինանսական հաշվետվություններ" ՖՀՄՍ 10-ում, և "Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում"* ՀՀՄՍ 28-ում, - "Ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև իրացումներ կամ ակտիվների հատկացում" (հրապարակվել է 2014թ. սեպտեմբերին): Ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռևս չի սահմանվել: Փոփոխությունները կիրառվում են առաջընթաց՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ:

  ՀՀՄՍ 28–ը փոխվել է արտացոլելու հետևյալը.
    - Բիզնես չհանդիսացող ակտիվների գծով ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև գործարքներից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում է ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկում ներդրողին չպատկանող բաժենամսի չափով:
    - Բիզնես հանդիսացող ակտիվների գծով ներդրողի և ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև գործարքներից առաջացող օգուտը կամ կորուստը ճանաչվում են ամբողջությամբ:

  ՖՀՄՍ 10–ը փոխվել է արտացոլելու հետևյալը.
    - Դուստր կազմակերպության վերահսկողության կորստից առաջացող օգուտ կամ կորուստը, որը չի ներառում բաժենմասնակության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման հետ բիզնես գործարք, մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվությունում ճանաչվում է տվյալ ներդման մեջ ներդրողին չպատկանող բաժենամսի չափով:Նմանապես, նախկին դուստր կազմակերպությունում ներդրման իրական արժեքով վերաչափումից առաջացող օգուտը կամ վնասը նախկին մայր կազմակերպության կողմից ճանաչվում է ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկում ներդրողին չպատկանող բաժենամսի չափով:

- Փոփոխություններ *"Համախմբված ֆինանսական հաշվետվություններ" ՖՀՄՍ 10-ում, և "Այլ կազմակերպություններում ներդրումների բացահայտում" ՖՀՄՍ-12-ում, "Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում կամ համատեղ ձեռնարկումներում"* ՀՀՄՍ 28-ում, - "Ներդրումային կազմակերպություններ – համախմբման պահանջից ազատում" (հրապարակվել է 2014թ. դեկտեմբերին) ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ից՝ վաղաժամկետ կիրառման թույլատվությամբ: Կիրառվում է հետընթաց:

  Փոփոխությունը պարզաբանում է, որ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելուց ազատումը կիրառելի է նաև այն մայր կազմակերպության համար, որը ներդրումային կազմակերպության դուստր է; նույնիսկ, եթե ներդրումային կազմակերպությունը իր բոլոր դուստր կազմակերպություններում ներդրումը չափում է իրական արժեքով՝ համաձայն ՖՀՄՍ 10–ի:

  Համապատասխան փոփոխություն կատարվել է նաև ՀՀՄՍ 28-ում, որը պարզաբանում է, որ բաժնեմասնակցության մեթոդի կիրառումից ազատումը հասանելի է ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում այն ներդրողի համար, որը իր բոլոր դուստր կազմակերպություններում ներդրումը իրական արժեքով չափող ներդրումային կազմակերպության դուստր կազմակերպություն է:

  Փոփոխությունը պարզաբանում է, որ ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկումում բաժնեմասնակցության մեթոդը կիրառելիս, ներդրողը կարող է պահպանել տվյալ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման կողմից իր դուստր կազմակերպությունների իրական արժեքով չափումը:

  Ներդրումային կազմկերպությունը, որը իր բոլոր դուստր կազմակերպություններին չափում է իրական արժեքով, պետք է ներկայացնի ՖՀՄՍ 12–ով պահանջվող բացահայտումները:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

3.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ-ներ) պահանջների համաձայն: ՖՀՄՍ-ները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակված ստանդարտներն ու մեկնաբանություններն են: Դրանք բաղկացած են՝

- Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից,
- Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներից,
- Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի (ՖՀՄՄԿ) մեկնաբանություններից, և
- Մեկնաբանությունների մշտական կոմիտեի (ՄՄԿ) մեկնաբանություններից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

3.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում:

3.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

3.4 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Այն հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

3.5 Դատողությունների, գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը և պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են

շարունակաբար: Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են փոփոխման և հետագա ժամանակաշրջաններում:

3.5.1 Գնահատման անորոշություններ

Հետևյալները հաշվետու ամսաթվի դրությամբ ապագայի վերաբերյա կարևոր ենթադրություններ և գնահատման այլ անորոշություններ են, որոնք էական ազդեցություն ունեն ակտիվների և պարտավորությունների ընթացիկ արժեքների վրա.

ա/ *Հետաձգված հարկային ակտիվներ (ծնթ. 12)*

Ընկերության ղեկավարությունը նախկինում հարկային ու հաշվապահական բազաների տարբերությունների մասով, որը հիմնականում պայմանավորված էր Մեղրի-Քաջարան գազատարի գծով ստացված նախավճարով (ծնթ. 23), ճանաչել էր հետաձգված հարկային ակտիվ:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ մոտ ապագայում գազատարը կօտարվի, որով կառաջանա բավարար գումարի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հաշվետու տարում հետաձգված հարկային ակտիվի աճը հիմնականում պայմանավորված է Գյումրի քաղաքում տեղակայված հիմնական միջոցների հարկային հաշվառման նպատակներով մաշվածության համար կիրառված արագացված դրույքաչափերով:

3.6 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժութային օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքներում:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- դեբիտորական պարտքեր,
- կրեդիտորական պարտքեր,
- վարկեր և փոխառություններ,
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, վարկերը և փոխառությունները չեն նախորոշվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները կազմված են դրամարկղի դրամական միջոցներից և ցպահանջ ավանդներից:

3.7.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Ֆինանսական գործիքները ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքները չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ անմիջականորեն կապված ծախսումները: Կարճաժամկետ (մինչև վեց ամիս մարման ժամկետ ունեցող) դեբիտորական և կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հավասար է համապատասխան գործարքի գնին, այսինքն՝ դեբիտորական (կրեդիտորական) պարտքի դիմաց ստացման (վճարման) ենթակա դրամական միջոցների անվանական գումարին, եթե զեղչման ազդեցությունը էական չէ:

3.7.2 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը դա այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով և հանած արժեզրկման գծով դուրսգրված ցանկացած գումար: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և կիրառվող ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամուտների և ծախսերի բաշխման մեթոդ է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որով մինչև մարման ժամկետը կամ շուկայի վրա հիմնված հաջորդ վերանայումը դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ զուտ հաշվեկշռային արժեքը: Այս հաշվարկում պետք է ներառվեն պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները:

3.7.3 Ֆինանսական գործիքների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվը (դեբիտորական պարտքերը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ.

ա) լրանում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ պահանջելու ժամկետը, կամ

բ) Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի հետ կապված դրամական միջոցներ ստանալու պայմանագրային իրավունքը՝ առանց պահպանելու ակտիվի նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերը և օգուտները:

Ֆինանսական պարտավորությունը (կրեդիտորական պարտքերը, ստացված վարկերը և փոխառությունները) դուրս է գրվում այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել, կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

3.8 Բաժնետիրական կապիտալ

3.8.1 Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերին անմիջականորեն վերագրվող ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում:

3.8.2 Բաժնետիրական կապիտալի հետգնում

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված գումարի չափը, ներառյալ ուղղակիորեն գործարքին վերագրվող ծախսերը, ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցումներ: Հետ գնված բաժնետոմսերը դասակարգվում են որպես հետ գնված սեփական փայամասնակցության գործիքներ և ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցումներ:

3.8.3 Շահաբաժիններ

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, որի ընթացքում հայտարարվում են:

3.9 Հիմնական միջոցներ

3.9.1 Ճանաչումը և սկզբնական չափումը

Հիմնական միջոցների միավորը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա) ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և

բ) դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Պահեստամասերը և սպասարկող սարքավորումները սովորաբար պահվում են որպես պաշարներ և ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակ, երբ ծախսվում են: Չնայած սրան, արժեքավոր պահեստամասերը և սարքավորումները որակվում են որպես հիմնական միջոցներ, երբ Ընկերությունը հույս ունի դրանք օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում: Նույն ձևով, այն պահեստամասերը և սպասարկող սարքավորումները, որոնք կարող են օգտագործվել միայն հիմնական միջոցի հետ համատեղ, հաշվառվում են որպես հիմնական միջոցներ:

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով:

Ձեռք բերված ակտիվի սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերմանն ուղղակիորեն վերաբերող բոլոր ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի և ուղղակի աշխատուժի ծախսումները, ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսում, ինչպես նաև ակտիվի ապատեղակայման և քանդման ու տեղանքի վերականգնման ծախսումները: Գնված ծրագիրը, որը համապատասխան սարքավորման գործունեության անբաժանելի մասն է կազմում, կապիտալացվում է որպես այդ սարքավորման մաս:

3.9.2 Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի միավորի վրա նոր բաղկացուցիչի ավելացման կամ հիմնական միջոցի միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները ավելացվում են հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե

ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների փոխարինվող բաղկացուցիչները ենթակա են ապաճանաչման:

Բացի վերը նշվածից հիմնական միջոցի վրա կատարվող մյուս ծախսումները (օրինակ՝ սպասարկման, պահպանման) չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

3.9.3 Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

3.9.4 Մաշվածություն

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հիմնական միջոցի մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն՝ երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Ընկերության մտադրություններին համապատասխան: Մաշվածության հաշվարկումը դադարեցվում է հետևյալ երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվին.

ա) երբ հիմնական միջոցը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող (կամ ներառվում է այն խմբի մեջ, որը դասակարգված է որպես վաճառքի համար պահվող)՝ համաձայն ՀՀՄՍ 5-ի, և

բ) երբ հիմնական միջոցը ապաճանաչվում է:

Մաշվածության հաշվարկումը չի դադարեցվում, երբ հիմնական միջոցը դադարում է օգտագործվել կամ հանվում է ակտիվ օգտագործումից, քանի դեռ ակտիվը ամբողջությամբ չի մաշվել:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	30 տարի
Կառուցվածքներ	30 տարի
Փոխանցող հարմարանքներ	30 տարի
Մեքենա-սարքավորումներ /նոր/	20 տարի
Մեքենա-սարքավորումներ /հին/	5 տարի
Տրանսպորտային միջոցներ	10-15 տարի
Արտադրատնտեսական գույք	5-10 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-5 տարի

3.9.5 Անավարտ հիմնական միջոցներ

Անավարտ հիմնական միջոցներ են հանդիսանում կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով: Սկզբնական արժեքը ներառում է նյութերի ձեռքբերման արժեքը, աշխատուժի ծախսումները և այլ ուղղակի ծախսումները:

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մաս: Որակավորվող ակտիվն այն ակտիվն է, որի համար անհրաժեշտ է զգալի ժամանակահատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման (կամ վաճառքի) համար:

Անավարտ շինարարության գծով մաշվածության հաշվարկն սկսվում է համապատասխան ակտիվների կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

3.10 Ոչ նյութական ակտիվներ

3.10.1 Չափումը

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

3.10.2 Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները, որոնք կատարվել են ոչ նյութական ակտիվի ֆունկցիաները ընդլայնելու, բաղկացուցիչը փոխարինելու կամ սպասարկելու համար, ավելացվում են ոչ նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքին, եթե Ընկերությունը կարող է ցուցադրել, որ այդ ծախսումները բավարարում են ոչ նյութական ակտիվի սահմանմանը և ճանաչման չափանիշներին: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են ծախս, երբ դրանք կատարվում են:

3.10.3 Հետագա ծախսումներ

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած արժեզրկումից կորուստ:

3.10.4 Ամորտիզացիա

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով ամորտիզացիայի հաշվարկման գծային մեթոդը:
Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան դադարում է հետևյալ երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվին.
ա) երբ ոչ նյութական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար նախատեսված, և
բ) երբ ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է:
Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

ՀՀ Էլեկտրաէներգետիկական համակարգի հեռանկարային զարգացման սխեմաներ	5 տարի
Հաշվապահական հաշվառման և այլ համակարգչային ծրագրեր	5-10 տարի

3.11 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է միջին կշռված արժեքի բանաձևով և ներառում է ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ վերամշակման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.12 Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:
Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խումբը) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:
Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է՝ արդյոք առկա՞ է ինքնարժեքով կամ ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվի (կամ միանման ակտիվների խմբի) արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն: Եթե առկա է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայություն, Ընկերությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ շահույթում կամ վնասում:
Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

3.13 Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որը ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և
բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

3.14 Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ

Ընկերությունում ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով, ակտիվը ներկա վիճակում պատրաստ (մատչելի) է անմիջապես վաճառվելու, և դրա վաճառքը շատ հավանական է հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում:

Ընկերությունը որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) չափում է դրանց հաշվեկշռային արժեքից և «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ»-ից նվազագույնով: Ընկերությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ՝ ակտիվի արժեքի ցանկացած սկզբնական կամ հետագա, մինչև «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներ» նվազեցման գծով:

3.15 Հասույթ

3.15.1 Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով, հաշվի առնելով վերադարձումները և արտոնությունները, առևտրային և ծավալային զեղչերը: Արտադրանքի և այլ ակտիվների իրացումից հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում սեփականության հետ կապված էական ռիսկերը և փոխհատուցումները, հատուցումը հավանական է, գործարքի հետ կապված ծախսերը և ապրանքների հնարավոր վերադարձումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չկա ապրանքների շարունակական կառավարում և հասույթի գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

3.15.2 Ծառայություններ

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվետու ամսաթվին գործարքի ավարտվածության աստիճանի համամասնությամբ:

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների իրացումից հասույթը ճանաչվում է ծառայությունների մատուցմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով: Այլ ծառայությունների ավարտման աստիճանը գնահատվում է հաշվի առնելով կատարված աշխատանքների ուսումնասիրությունը:

3.16 Պետական շնորհներ

Պետական շնորհները չեն ճանաչվում Ընկերության կողմից, քանի դեռ առկա չէ հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից պայմանները և շնորհները ստացվելու են: Պետական շնորհները Ընկերությունում ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով այն ժամանակաշրջանում, որի ընթացքում նրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են:

3.16.1 Ակտիվներին վերաբերող պետական շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները իրենց իրական արժեքով, հաշվեկշռում ներկայացված են որպես հետաձգված եկամուտներ: Ընկերության կողմից օգտագործվող ներկայացման մեթոդով շնորհը արտացոլվում է

որպես հետաձգված եկամուտ, որը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ և ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.16.2 Եկամուտներին վերաբերող պետական շնորհներ

Եկամուտներին վերաբերող շնորհները ներկայացվում են որպես այլ եկամուտներ:

3.17 Շահութահարկ

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են այնպիսի գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում: Նման դեպքերում ընթացիկ և հետաձգված հարկերը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում:

3.17.1 Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.17.2 Հետաձգված հարկեր

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային պարտավորություն՝ բացառությամբ նրանց, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումը, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որն այդ գործարքի պահին չի ազդում ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի (վնասի) վրա:

Հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող չօգտագործված հարկային վնասների գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացումը, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

3.18 Գործառնական վարձակալություն

Ընկերությունը, որպես վարձատու, իր գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվները ներկայացնում է հաշվապահական հաշվեկշռում, այդ ակտիվների բնույթին համապատասխան:

Գործառնական վարձակալության գծով եկամուտները ճանաչվում են՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության գծով ծախսերը, ներառյալ մաշվածությունը, ճանաչվում են որպես ծախս:

3.19 Ֆինանսական ծախսեր և եկամուտեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ընթացիկ հաշվիվների վրա հաշվեգրված տոկոսային եկամուտները:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով վճարվելիք տոկոսները: Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մաս: Որակավորվող ակտիվն այն ակտիվն է, որի համար անհրաժեշտ է զգալի ժամանակահատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման (կամ վաճառքի) համար: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվում (առաջանում) են:

3.20 Փոփոխություններ հաշվապահական գնահատումներում, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

3.20.1 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է, երբ պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ եթե այդ փոփոխությունը նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ չեն համարվում.
ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը տնտեսական գործունեության այնպիսի դեպքերի և գործարքների համար, որոնք իրենց

բովանդակությամբ տարբերվում են նախորդ տնտեսական գործունեության դեպքերից և գործարքներից,
բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը՝ տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների համար, որոնք առաջ տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը, որը կատարվում է նոր հաշվապահական հաշվառման ստանդարտի ընդունման հետ կապված, կիրառվում է ըստ անցումային դրույթների, եթե այդպիսիք կան տվյալ հաշվապահական հաշվառման ստանդարտում: Անցումային դրույթների բացակայության դեպքում՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, քանի դեռ դա իրագործելի է: Յուրաքանչյուր առաջացող ճշգրտում հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում նեկայացվում է որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում: Համեմատելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:
Հաշվետու տարում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ տեղի չեն ունեցել, որոնք կարող էին ազդեցություն գործել սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.20.2 Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունները դրանք ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:
Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ներառվում է զուտ շահույթի կամ վնասի որոշման մեջ.
ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ
բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:
Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:
Հաշվետու տարում հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություններ տեղի չեն ունեցել, որոնք կարող էին ազդեցություն գործել ընթացիկ կամ հաջորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.20.3 Նախորդող ժամանակաշրջանի էական սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները դրանք մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝
ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.
բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Նախորդող ժամանակաշրջանի էական սխալները ուղղվում են հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո.
ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ
բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.21 Համեմատական տեղեկատվության վերաներկայացում

Հաշվետու տարում կատարվել են նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող ճշգրտումներ՝ նրանք կիրառելով հետընթաց.

ա) հարկային պարտավորությունների ճշգրտում՝

- ոչ ռեզիդենտի շահութահարկ՝ 101,700 հազար դրամ, որը կապիտալացվել է «Կառուցվող հիմնական միջոցների» արժեքում, 2013թ.-ի համար՝ 44,987 հազար դրամ, 2014թ.-ի համար՝ 56,713 հազար դրամ;
- 2014թ.-ի ԱԱՀ գծով 3,880 հազար դրամ,
- 2014թ.-ի շահութահարկի գծով՝ 161 հազար դրամ:

բ) 2009թ.-ին Ընկերությունը այլ կազմակերպության անհատույց փոխանցել էր 30,000 հազար դրամ, սակայն այն ձևակերպվել էր որպես դեբիտորական պարտք:

գ) 2012թ. վերանորոգման աշխատանքների համար շինարարական կազմակերպությանը ավել է վճարվել և ծախսագրվել 3,915 հազար դրամի:

դ) Ընկերությանը 2014թ.-ին չի հաշվարկել այլ կազմակերպության տրամադրած փոխառության գումարի մարման ժամկետների ուշացման համար նախատեսված տույժերը՝ 7,197 հազար դրամ:

Նշված ուղղումները ունեցել են հետևյալ ազդեցությունը նախորդ տարիների համեմատական ցուցանիշների վրա.

ա/ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

01.01.2014թ.-ի դրությամբ

Հոդված	Նախկինում ներկայաց-ված	Ճշգրտում, գումարած/(հանած)			Վերաներ-կայացված
	01.01.2014թ.	ա	բ	գ	01.01.2014թ.
Հիմնական միջոցներ	46,845,671	44,987	-	-	46,890,658
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,688,302	-	(30,000)	3,915	2,662,217
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,727,200	44,987	-	-	11,772,187
Կուտակված շահույթ	9,858,037	-	(30,000)	3,915	9,831,952

բ/ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31.12.2014թ.-ի դրությամբ

Հոդված	Նախկինում ներկայաց-ված	Ճշգրտում, գումարած/(հանած)			Վերաներ-կայացված
	31.12.2014թ.	01.01.2014թ. ճշգրտումների ազդեցություն	ա	դ	31.12.2014թ.
Հիմնական միջոցներ	49,167,791	44,987	56,713	-	49,269,491
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,369,304	(26,085)	-	7,197	4,350,416
Շահութահարկի գծով կանխավճար	365,948	-	(161)	-	365,787
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,382,614	44,987	60,593	-	11,488,194
Կուտակված շահույթ	9,844,544	(26,085)	(4,041)	7,197	9,821,615

գ/ Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

31.12.2014թ.-ին ավարտվող տարվա վերաբերյալ

Հոդված	Նախկինում ներկայաց-ված	Ճշգրտում գումարած/(հանած)		Վերաներ-կայացված
	31.12.2014թ. ավարտվող տարի	ա	դ	31.12.2014թ. ավարտվող տարի
Այլ եկամուտ	939,067	-	7,197	946,264
Այլ ծախսեր	(776,600)	(3,880)	-	(780,480)
Շահութահարկի գծով ծախս	(717,033)	(161)	-	(717,194)

4. Հասույթ

	2015թ.	2014թ.
		հազար դրամ
Էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայությունների մատուցումից.		
ՀՀ Ներքին տարածքում	*6,344,325*	*6,818,021*
Հայաստանից դեպի Իրան	*1,222,196*	*1,273,678*
Հայաստանից դեպի Վրաստան	*-*	*53,521*
Վրաստանից դեպի Իրան	*94,507*	*152,217*
	7,661,028	8,297,437
Արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից	135,096	136,993
Էլեկտրաէներգիայի վաճառքից	572	44,183
	7,796,696	8,478,613

Ընկերության ծառայությունների իրացման սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունների Կարգավորման Հանձնաժողովի կողմից:

ա) Էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի տեղափոխման ծառայությունների մատուցման սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ
01.08.2015	0.8595
01.08.2014	1.3644
07.07.2013	1.0657
01.04.2012	0.3322
01.04.2011	0.8270
01.04.2010	0.7100
01.10.2009	0.3600
01.04.2009	0.8910
01.07.2008	0.3280
01.01.2008	0.8750

բ) «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը (առանց ԱԱՀ).

Կիրառման ամսաթիվը	դրամ/կՎտժ
01.07.2015	42.426
01.01.2015	38.005
01.01.2014	37.0072
01.01.2013	34.957
01.01.2012	35.339
01.01.2011	33.756
01.01.2010	32.816
01.01.2009	31.387
01.01.2008	31.447

5. Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Հիմնական միջոցների մաշվածություն	2,254,958	2,182,175
Աշխատանքի վարձատրության գծով	1,158,774	1,188,091
Նյութեր	115,630	98,070
Էլեկտրաէներգիայի արժեք	3,198	37,507
Այլ ծախսեր	68,469	71,155
	3,601,029	**3,576,998**

6. Վարչական ծախսեր

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Աշխատանքի վարձատրության գծով	818,693	754,771
Հիմնական միջոցների մաշվածություն	53,903	38,280
Սպասարկման և պահպանման ծախսեր	57,779	51,783
Կոմունալ ծախսեր	45,442	38,335
Չփոխհատուցվող հարկեր	44,315	36,133
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	31,209	28,974
Նորոգումների գծով ծախսեր	22,490	20,140
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	20,819	13,518
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	12,176	11,572
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	5,375	3,332
Գրասենյակային ծախսեր	4,593	4,212
Այլ ծախսեր	70,772	19,676
	1,187,566	**1,020,726**

7. Այլ եկամուտ

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Տույժերերի հաշվեգրումից	196,416	196,185
Եկամուտներին վերաբերող շնորհներից	158,142	8,989
Փաստացի և էֆեկտիվ տոկոսի տարբերություններ	134,153	199,839
Գործառնական վարձակալությունից	52,243	51,557
Մրցույթի հրավերներից եկամուտ	11,753	-
Պաշարների իրացումից	10,831	244,183
Նախագծային աշխատանքներից եկամուտ	6,875	-
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	4,439	4,371
Ոչ ռեզիդենտի շահութահարկի տույժերի վերահաշվարկից հարկային արտոնություն	-	227,738
Այլ եկամուտներ	46,303	13,402
	621,155	**946,264**

8. Այլ ծախսեր

հազար դրամ

	2015թ.	2014թ.
ՀՄ մաշվածություն	510,559	510,559
Տույժեր, տուգանքներ	202,731	15,756
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	189,522	1,560
ՎՄՁԲ հաղորդման ցանցի բարելավման դրամաշնորհի շրջանակներում այլ կազմակերպությունների համար կատարված ծախսեր	78,299	-
Էլ. էներգիայի համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանակների մշակում	37,915	-
Օտարված պաշարների ինքնարժեք	16,929	53,129
Վերապատրաստումներ	16,511	63,977
Վարձակալական ծախսեր	34	29,444
Գույքի գնահատման, գույքագրման և հաշվառման ծախսեր	2	45,680
Այլ ծախսեր	53,492	60,375
	1,105,994	**780,480**

9. Ֆինանսական ծախսեր

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Տոկոսային ծախսեր (ծնթ. 20.1.ա)	476,993	592,314
	476,993	**592,314**

10. Ֆինանսական եկամուտ

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Փոխառություններից (ծնթ. 18.1)	31,831	59,413
Այլ փոխհատուցում	34,998	68,657
Ցպահանջ հաշիվներից	6,160	5,415
	72,989	**133,485**

11. Այլ օգուտ/ (կորուստ)

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Արտարժույթի փոխարժեքի տարբերությունից		
վարկերի գծով	*616,165*	*(2,046,660)*
ակտիվների վերաբերող շնորհների գծով	*165,293*	*(355,397)*
եկամուտներին վերաբերող շնորհների գծով	*(9,177)*	*(44,013)*
դրամական միջոցների գծով	*(154,175)*	*145,356*
այլ հոդվածների գծով	*125,229*	*(339,607)*
	743,335	**(2,640,321)**
Հիմնական միջոցների օտարումից (ծնթ. 13.բ)	12,307	15,332
Հիմնական միջոցների լուծարումից (ծնթ. 13.բ)	(12,982)	(10,629)
Ոչ նյութական ակտիվների լուծարումից (ծնթ. 14.բ)	(7,776)	-
Անհատույց տրված ակտիվներից	(33,898)	(12,818)
Հիմնական միջոցների արժեզրկումից	(840,230)	-
Վաճառքի համար պահվող ակտիվների լուծարումից	-	(226,572)
Այլ	(33,583)	(5,979)
	(172,827)	**(2,880,987)**

12. Շահութահարկ

Ընկերության գործունեության արդյունքում առաջացած հարկվող շահույթի նկատմամբ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված է 20 տոկոս շահութահարկի դրույքաչափ (2014թ. – 20%):

Համաձայն նշված օրենքի Ընկերությունը պարտավոր է կատարել շահութահարկի նվազագույն կանխավճարներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 75%-ի չափով: Բացի այդ, համաձայն նույն օրենքի, Ընկերությունը տվյալ և նախորդ տարիներին կատարել է շահութահարկի նվազագույն կանխավճարներ, որոնք ենթակա են հետագա տարիներին առաջացող շահութահարկից նվազեցման: Շահութահարկի նվազագույն կանխավճարների 01.01.2014թ.-ից սկսած պահանջը չի գործում:

12.1. Շահութահարկի գծով ծախս

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Ընթացիկ հարկի գծով (ծնթ. 12.3)	194,383	31,596
Հետաձգված հարկի գծով (ծնթ. 12.2.բ)	192,143	685,598
Շահութահարկի գծով ծախս	**386,526**	**717,194**

12.2. Հետաձգված հարկային ակտիվներ

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Չօգտագործված հարկային վնասի գծով (ա)		
Տարեսկզբի մնացորդ	-	142,902
Տարվա հարկային վնաս/(հաշվանցում)	-	(142,902)
Տարեվերջի մնացորդ	-	-
Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով (բ)		
Տարեսկզբի մնացորդ	1,387,667	1,930,363
Տարվա փոխհատուցում/(ծախս)	(192,143)	(542,696)
Տարեվերջի մնացորդ	1,195,524	1,387,667
Ընդամենը տարվերջի մնացորդ	1,195,524	1,387,667

(ա) Չօգտագործված հարկային վնաս

Համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի՝ Ընկերության գործունեությունից շահութահարկի գծով վնասը փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

հազար դրամ

2015թ.	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցներ	(463,675)	(196,957)	(660,632)
Կրեդիտորական պարտքեր	1,851,342	1,294	1,852,636
Դեբիտորական պարտքեր	-	3,520	3,520
	1,387,667	(192,143)	1,195,524

հազար դրամ

2014թ.	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցներ	71,306	(534,981)	(463,675)
Կրեդիտորական պարտքեր (ա)	1,857,262	(5,920)	1,851,342
Դեբիտորական պարտքեր	1,795	(1,795)	-
	1,930,363	(542,696)	1,387,667

(ա) Նախորդ տարիներին հարկային նպատակով անհուսալի է ճանաչվել (ներառվել է հարկվող եկամտում) Մեղրի-Քաջարան գազատարի գծով նախավճարը՝ 9,137,100 հազար դրամի չափով (ծնթ. 23): Նշված պարտավորության մարման տարում՝ մարման գումարը հարկային նպատակով նվազեցվելու է:

12.3. Ընթացիկ հարկ

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2015թ.		2014թ.	
	հազար դրամ	*%*	*հազար դրամ*	*%*
Վնաս մինչև հարկումը ըստ ՖՀՍՍ-ների	1,946,431		706,857	
Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով	389,286	20	141,371	20.0
Արտարժութային վնասների հարկային հետևանք (ծնթ. 11)	(148,667)	(7.6)	528,064	74.7
Հիմնական միջոցների արժեզրկման հետևանք	168,046	8.6	-	-
Նախորդ տարվա հարկային վնասի օգտագործում	-		(142,902)	(20.2)
Հիմնական միջոցների մաշվածության հարկային և հաշվապահական ծախսերի տարբերություն	(304,854)	(15.7)	(490,628)	(69.4)
Հարկային տուգանքներ ու տույժերի վերահաշվարկումից	36,676	1.9	(45,548)	(6.4)
Չհարկվող շնորհներից	(6,597)	(0.3)	(42,191)	(6.0)
Չնվազեցվող տոկոսային ծախսերի հարկային հետևանքը	-	-	52,996	7.5
Դեբիտորական պարտքի դուրսգրման հետևանք	37,904	1.9	-	-
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսերի հարկային հետևանքը	6,780	0.3	12,818	1.8
Ոչ գործառնական ծախսերի հարկային հետևանքը	6,716	0.3	15,977	2.3
Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների) հարկային հետևանքը	9,093	0.4	1,639	0.2
Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը և ընթացիկ հարկի արդյունավետ դրույքը	**194,383**	**9.8**	**31,596**	**4.5**

12.4 Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Մնացորդը տարեսկզբին	**365,787**	**397,383**
Շահութահարկի գծով ընթացիկ հարկ (ծնթ. 12.3)	(194,383)	(31,596)
Շահութահարկի գծով հաշվարկված տուգանքներ/տույժեր (ծնթ. 8)	(97)	-
Վճարում	449	-
Մնացորդը տարեվերջին	**171,756**	**365,787**
Այդ թվում նվազագույն շահութահարկի գծով	-	*61,013*

13. Հիմնական միջոցներ

հազար դրամ

		Շենքեր	Կառուց-վածքներ	Փոխանցող հարմա-րանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	տնտեսական գույք, գործիքներ	տնկարկներ	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
Սկզբնական արժեք												
Առ 01.01.2014թ.		**3,592,715**	**2,993,718**	**66,835,597**	**56,545,414**	**1,259,634**	**525,709**	**532**	**1,581,919**	**4,569,319**	**90,583**	**137,995,140**
Ավելացումներ	**Ընդամենը**	**81,098**	**661,761**	**30,989**	**2,281,326**	**18,250**	**46,207**	**-**	**6,797**	**2,045,518**	**55,490**	**5,227,436**
	Ձեռք բերում	-	-	-	12,589	18,250	46,207	-	6,471	4,931,459	55,484	5,070,460
	կապիտալացում	42,081	10,734	30,989	72,846	-	-	-	326	-	-	156,976
	Անավարտ ՀՄ-ից	39,017	651,027	-	2,195,891	-	-	-	-	(2,885,941)	6	-
Նվազեցումներ	**Ընդամենը**	**(9,918)**	**(41,695)**	**-**	**(661,934)**	**(340,618)**	**-**	**-**	**(104,280)**	**-**	**-**	**(1,158,445)**
	օտարում	-	-	-	(201,908)	(340,618)	-	-	-	-	-	(542,526)
	լուծարում	(9,918)	(41,695)	-	(460,026)	-	-	-	(104,280)	-	-	(615,919)
Վերադասակարգում	ընթացիկ ակտիվի	-	-	-	**(384,143)**	-	-	-	-	**(75,492)**	-	(459,635)
Առ 31.12. 2014թ.		**3,663,895**	**3,613,784**	**66,866,586**	**57,780,663**	**937,266**	**571,916**	**532**	**1,484,436**	**6,539,345**	**146,073**	**141,604,496**
Ավելացումներ	**Ընդամենը**	**152,178**	-	**120,999**	**36,659**	**891**	**46,928**	-	**42,493**	**5,498,409**	**423,093**	**6,321,650**
	Ձեռք բերում	-	-	-	126	-	46,928	-	42,493	5,498,382	423,093	6,011,022
	կապիտալացում	152,178	-	120,964	36,533	891	-	-	-	62	-	310,628
	Անավարտ ՀՄ-ից	-	-	35	-	-	-	-	-	(35)	-	-
Նվազեցումներ	**Ընդամենը**	**(7,470)**	**(2,681)**	**-**	**(378,083)**	**(111,347)**	**(26,883)**	**-**	**(3,669)**	**-**	**-**	**(530,133)**
	օտարում	(649)	(1,332)		(345,604)	(111,347)	(26,883)					**(485,815)**
	լուծարում	(6,821)	(1,349)		(32,479)				(3,669)			**(44,318)**
Վերադասակարգում	Ներքին	**(8,832)**	**21,335**	**-**	**5,133**	**-**	**(4,544)**	**(430)**	**(12,662)**	**-**	**-**	**-**
Առ 31.12. 2015թ.		**3,799,771**	**3,632,438**	**66,987,585**	**57,444,372**	**826,810**	**587,417**	**102**	**1,510,598**	**12,037,754**	**569,166**	**147,396,013**

հազար դրամ

		Շենքեր	Կառուց-վածքներ	Փոխանցող հարմա-րանքներ	Մեքենաներ և սարքավորում ներ	Տրանսպորտային միջոցներ	տնտեսական գույք, գործիքներ	տնկարկներ	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ հիմնական միջոցներ	Հողամասեր	Ընդամենը
Կուտակված մաշվածություն												
Առ 01.01.2014թ.		2,627,347	2,137,818	46,230,130	34,681,255	1,095,681	435,368	37	835,031	-	-	88,042,667
Ավելացումներ		66,926	52,604	902,902	1,627,784	17,790	45,666	-	17,342	-	-	2,731,014
Նվազեցումներ		(9,918)	(35,620)	-	(457,459)	(340,618)	-	-	(104,276)	-	-	(947,891)
վերադաս.	պաշարի	-	-	-	(357,763)	-	-	-	-	-	-	(357,763)
Առ 31.12. 2014թ.		2,684,355	2,154,802	47,133,032	35,493,817	772,853	481,034	37	748,097	-	-	89,468,027
Ավելացումներ		74,295	118,303	942,658	1,570,518	19,391	31,278		62,978			2,819,421
Նվազեցումներ	**Ընդամենը**	(7,256)	(1,810)	-	(153,154)	(111,240)	(26,482)	-	(143)	-	-	(300,085)
	լուծարում	(6,820)	(478)	-	(8,670)	-	-	-	(143)	-	-	(16,111)
	օտարում	(436)	(1,332)	-	(144,484)	(111,240)	(26,482)	-	-	-	-	(283,974)
Վերադաս.-ում		(4,462)	18,773	-	(10,884)	-	(879)	65	(2,613)	-	-	-
Առ 31.12. 2015թ.		2,746,932	2,290,068	48,075,690	36,900,297	681,004	484,951	102	808,319	-	-	91,987,363
Կուտակված արժեզրկում												
Առ 01.01.2014թ.		100	7,155	78,516	2,945,384	2,031	13,852	-	14,777	-	-	3,061,815
Վերադաս.-ում		-	-	-	(2,907)	-	-	-	-	-	-	(2,907)
Դուրս գրում		-	-	-	(191,930)	-	-	-	-	-	-	(191,930)
Առ 31.12. 2014թ.		100	7,155	78,516	2,750,547	2,031	13,852	-	14,777	-	-	2,866,978
Ավելացում		-	98	83,668	754,652	-	776	-	1,036	-	-	840,230
Դուրս գրում	**Ընդամենը**	-	-	-	(212,688)	(39)	(153)	-	-	-	-	(212,880)
	լուծարում	-	-	-	(15,225)	-	-	-	-	-	-	(15,225)
	օտարում	-	-	-	(197,463)	(39)	(153)	-	-	-	-	(197,655)
Վերադասակ.ում		-	159	-	1,225	-	(4,784)	-	3,400	-	-	-
Առ 31.12. 2015թ.		100	7,412	162,184	3,293,736	1,992	9,691	-	19,213	-	-	3,494,328
Ընթացիկ արժեք												
Առ 01.01.2014թ.		965,268	848,745	20,526,951	18,918,775	161,922	76,489	495	732,111	4,569,319	90,583	46,890,658
Առ 31.12.2014թ.		979,440	1,451,827	19,655,038	19,536,299	162,382	77,030	495	721,562	6,539,345	146,073	49,269,491
Առ 31.12.2015թ.		1,052,739	1,334,958	18,749,711	17,250,339	143,814	92,775	-	683,066	12,037,754	569,166	51,914,322

(ա) Հաշվետու տարում հիմնական միջոցների ավելացումները բաղկացած են.

հազար դրամ

Կառուցվող հիմնական միջոցներ, այդ թվում՝	5,498,382
- *փոխառության ծախսումների կապիտալացումից (ծնթ. 20.2.բ)*	*730,445*
Հողամասեր	423,093
Կապիտալացում	310,628
Այլ հիմնական միջոցների ձեռքբերում	89,547
Ընդամենը	**6,321,650**

(բ) Հաշվետու տարում հիմնական միջոցների նվազեցումները.

հազար դրամ

	Սկզբնա-կան արժեք	Կոտակված մաշվածու-թյուն և արժեզրկում	Ընթացիկ արժեք	Լուծարու-մից մուտքեր/ Օտարման արժեք	Օտարու-մից/ լուծարու-մից օգուտ/ (կորուստ)
Լուծարված հիմնական միջոցներ	44,318	(31,336)	12,982	-	(12,982)
Օտարված հիմնական միջոցներ	485,815	(481,629)	4,186	16,493	12,307
	530,133	**(512,965)**	**17,168**	**16,493**	**(675)**

գ) Հաշվետու տարում կառուցվող հիմնական միջոցների շարժը հետևյալն է.

հազար դրամ

	Մնացորդ 01.01.2015թ.	Ավելացում	Նվազեցում	Մնացորդ 31.12.2015թ.
39 մլն. վարկային միջոցներով կառուցվող օդային գծեր – Գեղարքունիքի և Կոտայքի մարզ	5,578,986	4,889,371	-	10,468,357
KFW բանկի ֆինանսավորմամբ կառուցվող Հայաստան-Վրաստան օդային գծեր, Այրում և Դդմաշեն ենթակայանների կառուցում	-	226,449	-	226,449
Իրան-Հայաստան 3-րդ օդային գծի կառուցում	960,324	180,270		1,140,594
Էլ. հաղորդման ցանցի բարելավում ծրագրի շրջանակներում Աշնակ ե/կ և ԷԷՕՀ կարգավարական պահուստային կենտրոնի կառուցում	-	100,123	-	100,123
Էլ. մատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում ծրագրով վերակառուցվող ենթակայաններ (Հաղթանակ, Չարենցավան, Վանաձոր)	-	94,703	-	94,703
Ագարակ-Շինուհայր ենթակայանի վերակառուցում	-	6,996	-	6,996
Արարատ-2 և Եղեգնաձոր ենթակայանների վերակառուցում	-	470	-	470
Ճյուղ Բջնի 110 կվ օդային գիծ	35	-	(35)	-
	6,539,345	5,498,382	(35)	12,037,692

14. Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Արտոնագրեր, լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 1 հունվարի 2014թ.	19,500	21,838	-	41,338
Ավելացումներ	3,800	990		4,790
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	23,300	22,828	-	46,128
Ավելացումներ	29,200	-	3,800	33,000
Նվազեցումներ	(19,500)	-	-	(19,500)
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	33,000	22,828	3,800	59,628
Ամորտիզացիա				
Առ 1 հունվարի 2014թ.	9,735	11,270	-	21,005
Ավելացումներ	1,963	1,369	-	3,332
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	11,698	12,639	-	24,337
Ավելացումներ	3,513	1,463	399	5,375
Նվազեցումներ	(11,724)	-	-	(11,724)
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	3,487	14,102	399	17,988
Ընթացիկ արժեք				
Առ 1 հունվարի 2014թ.	9,765	10,568	-	20,333
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	11,602	10,189	-	21,791
Առ 31 դեկտեմբերի 2015թ.	29,513	8,726	3,401	41,640

15. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

հազար դրամ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար (ա)	675,822	1,312,507
Այլ	200	200
	676,022	**1,312,707**

(ա) Կանխավճարը մեծամասամբ վերաբերվում է Կոտայքի մարզում օդային գծեր կառուցող կապալառուին տրված կանխավճարի մնացորդին (ծնթ 13.գ.):

16. Պաշարներ

		հազար դրամ
	31.12.2015թ.	31.12.2014թ.
Պահեստամասեր	408,167	406,475
Նյութեր	597,294	605,114
Համալրող շինվածքներ	366,072	366,888
Շինանյութեր	647,173	649,779
Այլ	60,026	57,036
	2,078,732	**2,085,292**

17. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

		հազար դրամ
	31.12.2015թ.	31.12.2014թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր		
Հաղորդած էլեկտրաէներգիայի գծով (ա)	4,273,756	2,139,829
Արտադրված էլեկտրաէներգիայի գծով	25,593	34,788
Պաշարների վաճառքի գծով	13,487	39,630
Հիմնական միջոցների վաճառքի գծով	2,487	4,230
Գործառնական վարձակալության գծով	7,054	6,684
Այլ	90	-
	4,322,467	**2,225,161**
Անհավաքելիության գծով պահուստ	(17,600)	-
	4,304,867	**2,225,161**
Այլ դեբիտորական պարտքեր		
Կանխավճարներ հարկերի գծով	281,714	346,599
Վարկերի ստացման հանձնառության վճարներ (բ)	3,389,301	1,492,988
Դեբիտորական պարտքեր տույժերի գծով	202,617	10,834
Ստացվելիք շնորհ	-	264,827
Այլ	16,470	10,007
	3,890,102	**2,125,255**
	8,194,969	**4,350,416**

(ա) Դեբիտորական պարտքի մեծ մասը մարվել է 2016թ.-ի ապրիլի դրությամբ:

(բ) Հաշվետու ամսաթվի դրությամբ վարկերի ստացման գծով հանձառության վճարների մնացորդը իրենից ներկայացնում է վարկային տրանշների գծով դեռևս ստացվելիք վարկերի համամասնական չամորտիզացված մասնաբաժինը:

19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար դրամ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Ընթացիկ հաշիվներ – ՀՀ դրամով	675,703	158,444
Ընթացիկ հաշիվներ – ԱՄՆ դոլարով	26,999	10,277
Ընթացիկ հաշիվներ – Եվրոյով	100	1,716,462
Դրամարկղում – ՀՀ դրամով	2,351	4,315
	705,153	**1,889,498**

20. Վարկեր և փոխառություններ

հազար դրամ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Ոչ ընթացիկ	22,112,186	20,573,124
Ընթացիկ	1,563,063	3,149,753
	23,675,249	**23,722,877**

20.1. Վարկային միջոցների շարժ

2015թ.

	Մնացորդ 01.01.2015	Վերաչափում	Ստացում	Շնորհի ճանաչում	Տարվա ծախս*	Մարում	Արտարժու-թային վնաս/ (օգուտ)	Մնացորդ 31.12.2015
KFW 14.060.527 0.75 տարեկան Euro	6,744,635 € 11,679,628				44,730 € 84,622	(301,239) (€ 571,294)	(570,522)	5,917,604 € 11,192,956
KFW 4.700.000 Euro 5 % տարեկան	625,400 € 1,083,000				24,064 € 45,526	(404,693) (€ 767,526)	(53,913)	190,858 € 360,999
WB 19,600,000$, 0.5% տարեկան	7,162,013 $15,078,875				34,865 $ 72,467	(416,594) ($ 866,114)	130,195	6,910,479 $ 14,285,227
WB 8,988,290$, 0.5% տարեկան	2,374,863 $5,000,026				11,398 $ 23,818	(316,720) ($ 655,487)	43,651	2,113,192 $4,368,358
KFW 7,300,000 Euro 0,75% տարեկան- Տրանշ-1	708,829 € 1,227,474	51,896 € 89,867			84,840 € 160,502	(24,974) (€ 47,362)	(64,310)	756,281 € 1,430,481
KFW 7,300,000 Euro 2,88% տարեկան- Տրանշ-2	2,246,131 € 3,889,607	60,178 € 104,210			241,494 € 456,871	(402,731) (€ 763,787)	(195,845)	1,949,227 € 3,686,900
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ 39,000,000 դոլար 1,83%	2,127,889 $4,480,049	267,121 $ 562,396	2,382,351 $ 4,995,002	(1,527,158) ($ 3,201,965)	390,237 $ 808,895	(135,353) ($ 280,960)	56,966	3,562,053 $ 7,363,417
ՎԶՄԲ 39,000,000$ վարկի համաֆինանսավոր.	186,737	24,805	1,560,758	(991,297)	86,030	(22,831)	-	844,202
ADB 15,192,000$ վարկի համաֆինանսավորում			31,444	(19,687)	366	(2)	-	12,121
ADB 15,192,000 SDR			125,400 SDR 186,558	(78,784) (SDR 117,461)	1,926 SDR 2,885	- -	(173)	48,369 SDR 71,986
ՎԶՄԲ 40,000,000 դոլար			47,623 $ 100,000	(32,701) ($ 68,667)	1,585 $ 3,300	- -	247	16,754 $ 34,633
ՎԶՄԲ 52,000,000 դոլար			26,098 $ 54,486	(20,060) ($ 41,879)	15,356 $ 31,842	(11,779) ($ 24,450)	60	9,675 $ 19,999
Իրան-Հայաստան օդային գծի ֆինանսավորման վարկ ԻԱԶԲ			927,640 € 1,742,600		57,993 € 109,691	- -	(6,345)	979,288 € 1,852,291
					68,125 $ 125,000	(68,125) ($ 125,000)	- -	- -
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ			25,968			(374)		25,594
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ			26,278			(1,278)		25,000
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ			22,094			(548)		21,546
Սանիր ՖԶԷ			276,976 € 520,517		17,814 € 33,694	- -	(1,784)	293,006 € 554,211
Որոտանի ՀԵԿ	1,546,380					(1,546,380)		-
KFW 10,200,000 €	- -		- -		10,896 € 20,613	(10,880) (€ 20,613)	(16)	- -
KFW 75,000,000 €	- -				80,117 € 151,563	(80,001) (€ 151,563)	(116) -	
Արդյին բանկ 5,000,000 $			2,358,900 $ 5,000,000		35,602 $ 71,945	(2,440,242) ($ 5,071,945)	45,740	-- -
Ընդամենը	**23,722,877**	**404,000**	**7,811,536**	**(2,669,687)**	**1,207,438**	**(6,184,750)**	**(616,165)**	**23,675,249**

2014թ.

	Մնացորդ 01.01.2014	Վերաչափում	Ստացում	Ընորի ճանաչում	Տարվա ծախս *	Մարում	Արտարժու-թային վնաս/ (օգուտ)	Մնացորդ 01.01.2015
KFW 14.060.527 0.75 տարեկան Euro	6,807,794 € 12,166,769				49,984 € 88,186	(325,164) (€ 575,327)	212,021	6,744,635 € 11,679,628
KFW 4.700.000 Euro 5 % տարեկան	1,005,256 € 1,796,575		4,839 € 8,724		46,331 € 81,896	(454,434) (€ 804,196)	23,408	625,400 € 1,083,000
WB 19.600.000$, 0.5% տարեկան	6,438,611 $15,872,723				33,202 $76,343	(372,916) ($870,192)	1,063,116	7,162,013 $15,078,875
WB 8.988.290$, 0.5% տարեկան	2,364,565 $5,829,220				13,451 $30,765	(385,651) ($859,958)	382,498	2,374,863 $5,000,026
KFW 7.300.000 Euro 0,75% տարեկան- Տրանշ-1	559,926 € 1,000,690		403,470 € 659,742	(308,780) (€ 534,713)	83,345 € 147,000	(25,578) (€ 45,246)	(3,554)	708,829 € 1,227,474
KFW 7.300.000 Euro 2,88% տարեկան- Տրանշ-2	2,125,895 € 3,799,363	(8,743) (€ 15,628)	520,310 € 842,278	(272,234) (€ 471,426)	287,318 € 507,101	(436,354) (€ 772,082)	29,939	2,246,131 € 3,889,607
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ 39,000,000$ 1,83%	849,260 $2,093,629	8,435 $20,794	3,117,902 $6,766,787	(2,272,135) ($4,783,744)	218,304 $516,218	(55,396) ($133,635)	261,519	2,127,889 $4,480,049
ՎԶՄԲ 39,000,000$ վարկի համաֆինանսավոր.	11,985	119	531,249	(376,378)	21,236	(1,474)		186,737
ASHIB EURO	755,379 € 1,350,000				22,718 € 40,022	(794,927) (€ 1,390,022)	16,830	
ASHIB USD	409,696 $1,010,000				5,938 $14,582	(418,775) ($1,024,582)	3,141	
ASHIB USD			602,163 $1,451,030		48,614 $115,200	(708,518) ($1,566,230)	57,741	
ASHIB AMD			123,000		777	(123,777)		
ASHIB AMD			100,000		636	(100,636)		
Որոտանի ՀԵԿ	2,046,380					(500,000)		1,546,380
Ընդամենը	**23,374,747**	**(189)**	**5,402,933**	**(3,229,527)**	**831,854**	**(4,703,600)**	**2,046,659**	**23,722,877**

20.2. Վարկերի և փոխառությունների տոկոսներ

հազար դրամ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Ժամանակաշրջանի ծախսերին վերագրվող տոկոսային ծախսեր (ա) (ծնթ. 9)	476,993	592,314
Վերագրվել է անավարտ շինարարության կապիտալացվող ծախսումներին (բ) (ծնթ. 13 բ)	730,445	239,540
	1,207,438	831,854

ա) Ժամանակաշրջանի ծախսերին վերագրվող տոկոսային ծախսեր

	31.12.2015թ.	31.12.2014թ.
KFW 7.300.000 Euro 2,88% տարեկան- Տրանշ-2	241,494	287,319
KFW 7.300.000 Euro 0,75% տարեկան- Տրանշ-1	84,839	83,345
KFW 14.060.527 0.75 տարեկան Euro	44,730	49,984
Արդշին բանկ	35,603	78,682
WB 19.600.000$, 0.5% տարեկան	34,865	33,202
KFW 4.700.000 Euro 5 % տարեկան	24,064	46,331
WB 8.988.290$, 0.5% տարեկան	11,398	13,451
	476,993	592,314

բ) Անավարտ շինարարության կապիտալացվող ծախսումներ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ 39մլն դոլար 1,83%	390,237	218,304
Իրան-Հայաստան օդային գծի ֆինանսավորման վարկ ԻԱԶԲ	138,969	-
ՎԶՄԲ 39 մլն վարկի համաֆինանսավորում	86,030	21,236
ՀՀ ՖՆ 75 մլն €	80,117	-
ՎԶՄԲ 52 մլն դոլար	15,355	-
ՀՀ ՖՆ 10,2 մլն €	10,896	-
Սանիր ՖԶԷ	4,962	-
ADB 15.192 մլն SDR	1,926	-
ՎԶՄԲ 40 մլն դոլար	1,586	-
ADB 15.192 մլն վարկի համաֆինանսավորում	367	-
	730,445	239,540

20.3. Վարկերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն.

Վարկ	Ֆինանսավորման համաձայնագիր	Նպատակը	Մարման ժամկետներ	Տարեկան %	Երաշխիք*/ գրավ
KFW 14.060.527 0.75տարեկան .Euro	25.06.1999թ. Հոսանքահաղորդիչ համա-կարգի վերականգման» ծրագիրը ֆինանսավորելու մասին	Կամո և Վանաձոր 2 «Հոսանքահաղորդիչ համակարգի վերականգման»	12/30/2038	0.75	Մուրհակներ
KFW 4.700.000 Euro 5 տոկոս	07.02.2005թ. «Տարածաշրջանային հզորության փոխանա-կում», «Ալավերդի-Գարդաբանի էլեկտրաէներգիայի տեղափոխման գծի վերականգնում-2003 66 054» վարկային ծրագրի ֆինանսավորման մասին	«Տարածաշրջանայի ն հզորության փոխանակում», «Ալավերդի-Գարդաբանի էլեկտրաէներգիայի տեղափոխման գծի վերականգնում-2003 66 054»	6/30/2016	5.0	Մուրհակներ
WB 19.600.000$, 0.5 տոկոս	8 ենթակայանների վերանորոգումների, վերակառուցումների ֆինանսավորում	Էլ հաղորդման եվ բաշխիչ ցանցի ծրագիր	12/5/2033	0.5	Մուրհակներ
WB 8.988.290$, 0.5 տոկոս	Պարտքի փոխանցման Պայմանագիր 4(48)/CP-2004	Օժանդակություն համակարգին	12/17/2022	0.5	Մուրհակներ
KFW 14.600.000 Euro 5 տոկոս Տրանշ 1-7.300.000	07.11.2009թ. «Գյումրի-2 ենթակայանի վերականգնում» վարկային ծրագրի ֆինանսավորման մասին	Գյումրի-2 ենթակայանի վերականգնում	6/30/2049	0.75 0.25	փոխադրման գծեր հենասյուներով գրավ և թողարկված մուրհակ
KFW 14.600.000 Euro 5 տոկոս Տրանշ 2-7.300.000	07.11.2009թ. «Գյումրի-2 ենթակայանի վերականգնում» վարկային ծրագրի ֆինանսավորման մասին	Գյումրի-2 ենթակայանի վերականգնում	6/30/2024	3.78 0.25	փոխադրման գծեր հենասյուներով գրավ և թողարկված մուրհակ
Վերակառուցման և զարգացման Միջազգային Բանկ 39 մլն վարկ	01.06.2011թ. ՀՀ և ՎԶՄԲ միջև կնքված համաձայնագիր	Էլեկտրոմատարարման հուսալիության ծրագիր	6/15/2036	2.15 1.99 1.83	Մուրհակներ
ՎԶՄԲ 39 մլն վարկի Համաֆինանսավորում	01.06.2011թ. ՀՀ և ՎԶՄԲ միջև կնքված համաձայնագիր	Էլեկտրոմատարարման հուսալիության ծրագիր		2.15	
ADB 15.192 mln SDR	05.09.2014թ. ՀՀ և ԱԶԲ-ի միջև կնքված համաձայնագիր	Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում	5/15/2039	2.00	
ADB 15.192 mln SDR համաֆինանսավորում	05.09.2014թ. ՀՀ և ԱԶԲ-ի միջև կնքված համաձայնագիր	Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում	11/15/2039	2.00	
WB 40 մլն USD	06.08.2014թ. ՀՀ և ՎԶՄԲ միջև կնքված համաձայնագիր	Էլեկտարահաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումն ու թողունակության բարձրացում	2/15/2039	1.83 1.91 2.07	Մուրհակներ
WB 52 mln USD	08.04.2015թ. ՀՀ և ՎԶՄԲ-ի միջև կնքված վարկային համաձայնագիր	Էլեկտրահաղորդման ցանցի և համակարգի կառավարման հուսալիության բարելավում: էլեկտրամատակարարման ապահովման ջանքերի օժանդակումը	11/15/2039	1.24 1.45 0.25	Մուրհակներ

Վարկ	Ֆինանսավորման համաձայնագիր	Նպատակը	Մարման ժամկետներ	Տարե-կան %	Երաշխիք*/ գրավ
Իրան-Հայաստան օդային գծի ֆինանսավորման վարկ ԻԱՁԲ /EUR/	26.06.2011թ. Իրանի Արտահանման Զարգացման Բանկի և Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի միջև կնքված 900/M/ARM/09	Իրան-Հայաստան 400կՎ 3-րդ էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի կառուցում	3/15/2022	5.00	
Սանիր ՖՁԷ /EUR/	23/02/2012թ. Փոխառության պայմանագիր	Իրան-Հայաստան 400կՎ 3-րդ էլեկտրահաղորդման գծի և ենթակայանի նախագծման, ճարտարագիտության, շինարարաության, մոնտաժման, փորձարկման և շահագործման	9/15/2018	5.00	
KFW 10,2 մլն €	09.12.2014թ. ՀՀ և Մայնի Ֆրանկֆուրտի կրեդիտանշտատ Ֆյուր Վիդերաուֆբարու (KFW)-ի միջև կնքված համաձայնագիր	«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց 1» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ ենթակայաններ)	12/30/2054	0.75 0.25	
KFW 75 մլն €	09.12.2014թ. ՀՀ և Մայնի Ֆրանկֆուրտի կրեդիտանշտատ Ֆյուր Վիդերաուֆբարու (KFW)-ի միջև կնքված համաձայնագիր	«Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց 1» (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ ենթակայաններ)	12/30/2029	1.85 0.25	
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ	16.03.2015թ. Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի Արևելյան Մ/Ճ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկ և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված համաձայնագիր	Էներգախնայողության ծրագրի իրականացում	11/30/2021	Ծառայությունների մատուցման վճար	
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ	17.08.2015թ. Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի Զանգեզուր և Գորիս Մ/Ճ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկ և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված համաձայնագիր	Էներգախնայողության ծրագրի իրականացում	7/30/2025	Ծառայությունների մատուցման վճար	
Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգոխնայողության հիմնադրամ	17.08.2015թ. Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի Հարավային Մ/Ճ-ի և Հայաստանի վերականգնվող էներգետիկ և էներգախնայողության հիմնադրամի միջև կնքված համաձայնագիր	Էներգախնայողության ծրագրի իրականացում	10/30/2022	Ծառայությունների մատուցման վճար	

(*) Որպես «Ենթավարկային համաձայնագրով» վճարային պարտավորությունների ապահովման միջոց Ընկերության կողմից թողարկվել և ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրվել վարկերի մարման անուիտետի գումարների անվանական արժեքի չափով տվյալ քանակի հասարակ անտոկոս մուրհակներ:

21. Ակտիվներին վերաբերող շնորհներ

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Մնացորդը տարեսկզբին	**7,961,716**	**4,757,537**
Ավելացումներ (ա)	2,265,687	3,229,720
Եկամուտներին վերաբերող շնորհի վերադասակարգումից	145,338	-
Արտարժութային (օգուտ)/կորուստ	(165,293)	355,397
Տոկոսային ծախսի գծով հաշվանցում	(303,146)	(176,728)
Փաստացի և էֆեկտիվ տոկոսի տարբերություն	(134,153)	(199,839)
Եկամտի ճանաչում	(4,439)	(4,371)
Մնացորդը տարեվերջին	**9,765,710**	**7,961,716**

ա) Ավելացումները ներառում են շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի գծով օգուտը (ծնթ. 20):

22. Եկամուտներին վերաբերող շնորհներ

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Մնացորդը տարեսկզբին	**308,396**	**-**
Ավելացումներ	9,458	273,372
Ակտիվներին վերաբերող շնորհի վերադասակարգում	(145,338)	
Արտարժութային (օգուտ)/կորուստ	9,177	44,013
Եկամտի ճանաչում	(158,142)	(8,989)
Հաշվեգրված (ստացվելիք) շնորհի ապաճանաչում	(23,551)	
Մնացորդը տարեվերջին	**-**	**308,396**

23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ

	31.12.2015թ.	31.12.2014թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր		
Հիմնական միջոցների գծով	1,973,546	1,879,542
Այլ	14,573	7,447
	1,988,119	**1,886,989**
Այլ կրեդիտորական պարտքեր		
Մեղրի-Քաջարան գազատարի գծով նախավճար*	9,137,100	9,137,100
Աշխատավարձի գծով	592	88,143
Հարկերի գծով	156,357	251,972
Չօգտագործված արձակուրդների գծով	126,078	119,569
Այլ	12,645	4,421
	9,432,772	**9,601,205**
	11,420,891	**11,488,194**

* Գազատարի համար նախավճարը կատարվել է 2007թ.-ին: Գազատարի օտարման ժամկետները փոխադարձ համաձայնությամբ պարբերաբար հետաձգվել են, և ակնկալվում է, որ այն կկայանա մոտ ապագայում:

24. Կանոնադրական կապիտալի գործարքներ

24.1 Կանոնադրական կապիտալի աճ

ՀՀ կառավարության 10.06.2015թ. թիվ 617-Ն որոշման համաձայն «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի հանդեպ 1,546,292.8 հազար դրամի փոխառության մարումը իրականացվել է Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման միջոցով՝ կազմելով 113,698 բաժնետոմս:

24.2 Կապիտալի հետգնում

ՀՀ Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի թիվ 557-Ա որոշման հիման վրա Ընկերությունը 2015թ.-ին բաժնետիրոջը 681 հատ բաժնետոմսերի հետգնման դիմաց, որը կազմում է 9,262 հազար դրամ, հանձնել է 21,786 հազար դրամի մետաղի ջարդոն:

24.3. Այլ տեղեկություններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ (ինչպես նաև 31.12.2014թ.-ի դրությամբ), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը սահմանված է 13,600 դրամ:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության հայտարարված և տեղաբաշխված կանոնադրական կապիտալը կազմում է 643,752 հատ հասարակ բաժնետոմս՝ մեկ բաժնետոմսի արժեքը՝ 13,600 դրամ, ընդամենը՝ 8,755,027 հազար դրամ:

25. Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձանակազմին տրված հատուցումները հետևյալն են.

հազար դրամ

	2015թ.	2014թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	33,310	48,119
	33,310	**48,119**

26. Ֆինանսական գործիքներից բխող ռիսկեր

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը հակված է պարտքային, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետ կապված ռիսկերին:

26.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, երբ գործընկերների կողմից Ընկերության նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում Ընկերությունը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկն առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային և այլ դեբիտորական պարտքերից և մատակարարներին տրված կանխավճարներից:

Հաշվետու ամսաթվի դրությամբ, Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը՝ ընդամենը 4,304,867 հազար դրամ, հիմնականում ներառում է հաղորդած էլեկտրաէներգիայի դիմաց ստացվելիք գումարները: Ընկերությունը Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ից դեբիտորական պարտքերի հավաքելիության համար ունի բանկային երաշխիք:

31.12.2015թ. դրությամբ առկա առևտրային դեբիտորական պարտքի ժամկետայնությունը կազմել է.

հազար դրամ

	31.12.2015թ.
Մինչև 59 օր	1,421,767
60-179 օրից ավել	2,883,100
	4,304,867

26.2 Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Ընկերության տոկոսադրույքային ռիսկը առաջացել է երկարաժամկետ փոխառություններից: Ընկերությունը ունի ՀՀ ֆինանսների նախարարությունից (Միջազգային Զարգացման Ընկերակցությունից, Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկից, KfW-ից) և այլ միջազգային ու տեղական բանկերից ստացված վարկեր և տեղական կազմակերպություններից ստացված փոխառություններ՝ ֆիքսված և փոփոխական տոկոսադրույքներով: Փոփոխական տոկոսադրույքով փոխառությունը Ընկերության համար առաջացնում է ապագա դրամական հոսքերի տոկոսադրույքային ռիսկ, իսկ հաստատուն տոկոսադրույքով փոխառությունը՝ իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկ: Նշված վարկերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացված է 20–րդ ծանոթագրությունում: Ղեկավարությունը չունի ֆիքսված կամ տատանվող

դրույքաչափերի հանդեպ Ընկերության հակվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն:

26.3 Արտարժույթի ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքներին, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ:

Հաշվետու տարում Ընկերության արժութային ռիսկը հիմնականում կապված է ԱՄՆ դոլարով արտահայտված վարկային պարտավորությունների մնացորդների հետ: Ղեկավարությունը չի հեջավորում արտարժույթի ռիսկի հանդեպ Ընկերության հակվածությունը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության արտարժույթով դրամական միջոցները հետևյալն են.

	ԱՄՆ դոլարով	Եվրոյով	Ընդամենը
Արտարժույթով հոդվածներ	հազար դրամ համարժեք	հազար դրամ համարժեք	հազար դրամ համարժեք
Դրամական միջոցներ	26,999	100	27,099
Վարկեր	(12,660,521)	(10,086,264)	(22,746,785)
Կրեդիտորական պարտքեր	(1,690,570)	(199,027)	(1,889,597)
Ընդամենը	**(14,324,092)**	**(10,285,191)**	**(24,609,283)**

ԱՄՆ դոլարի և Եվրոյի նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դեկտեմբերի 31-ի դրությամբ սահմանված են հետևյալ հաշվարկային փոխարժեքները.

	31.12.2015	31.12.2014	Դրամի արժևորում/ (արժեզրկում)
	ՀՀ դրամ	ՀՀ դրամ	
1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը	483.75	474.97	(1.8%)
1 Եվրոյի փոխարժեքը	528.69	577.47	8.4%

Զգայունության վերլուծություն

ՀՀ դրամի փոխարժեքի 5%-ով արժեզրկումը նշված արժույթների հանդեպ 2015թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ կնվազեցնի սեփական կապիտալը 1,230,464 հազար դրամ գումարով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

ՀՀ դրամի փոխարժեքի 5%-ով ամրապնդումը նշված արժույթների հանդեպ 2015թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ կունենա գումարային առումով նույն, սակայն հակառակ ազդեցություն սեփական կապիտալի վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

02.05.2015թ. դրությամբ, նշված փոխարժեքների գծով փոփոխությունը հաշվետու ամսաթվին սահմանված փոխարժեքների նկատմամբ կազմել է.

	02.05.2015թ. ՀՀ դրամ	ՀՀ դրամի ամրապնդում / (արժեզրկում)
1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը	478.56	1.1%
1 Եվրոյի միջին փոխարժեքը	549.67	(3.8%)

26.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:
Փոխառությունների և վարկային պարտավորությունների գծով մարումները դրամական հոսքերի կանխատեսումներում ներառվում են՝ հիմնվելով վարկային ժամանակացույցի վրա:
Ընկերության ֆինանսական բաժինը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:
Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ: Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորությունները, որոնք խմբավորվել են ըստ մարման ժամկետայնության՝ հաշվետվության օրվանից հետո:

Ոչ-ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	Մարման ժամկետները			
	մինչև 6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	5 տարի և ավելի
Փոխառությունների և վարկերի գծով պարտավորություններ	922,972	1,044,915	10,029,929	26,766,999
Գնումների գծով	124,778	-	1,762,211	-
Աշխատանքի հատուցման գծով	592	-	-	-
Ընդամենը	**1,048,342**	**1,044,915**	**11,792,140**	**26,766,999**

27. Պայմանական դեպքեր

27.1 Ապահովագրություն

Ընկերության շենքերը և սարքավորումները, բացառությամբ տրանսպորտային միջոցների, ապահովագրված չեն: Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով՝ բացառությամբ տրանսպորտային միջոցների պատահարների արդյունքում երրորդ անձանց հասցված վնասից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.2 Պայմանական պարտավորություններ և պահուստներ

Չի անկնկալվում որևէ էական պարտավորության առաջացում Ընկերության դեմ հարուցված դատական հայցերից կամ այլ պայմանական պարտավորություններից՝ բացառությամբ նրանց, որոնք արդեն ճանաչվել են սույն ֆինանսական հաշվետվություններում:

27.3 Հարկային օրենսդրության երկիմաստություններ և պայմանականություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը երբեմն հստակ չէ և պահանջում է մեկնաբանություններ: Երբեմն հարկային իրավասու մարմինները տալիս են տարբեր մեկնաբանություններ: Հարկային ստուգումներ և ուսումնասիրություններ իրականացնում են օրենքով նման լիազորություններ ունեցող մարմինները: Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Սակայն որոշ հանգամանքներում սույն վաղեմության ժամկետը կարող է կասեցվել:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը հավատացած է, որ համապատասխանորեն գնահատել է հարկային պարտավորությունները՝ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

28. Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը:
Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը:
Հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարեվերջի դրությամբ Ընկերության փոխառու միջոցները մեծամասամբ կազմված են փոխառություններից և վարկերից (ծնթ. 20):

Ընկերությունը չունի կապիտալի արտաքին ներգործության պահանջներ: